



Յ ՈՒ Ց Ա Վ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 605
ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 63:— Պրակները՝ 5:— Մեծությունը՝
21×16.8×1 սմ.:— **Նյութը՝** բարակ հասարակ թուղթ:
— **Կազմը՝** սև թղթով ծածկված հաստ ստվարա-
թուղթ:— **Պահպանակները՝** չունի:— **Վիճակը՝** լավ:—
Գրությունը՝ միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 54բ և
55ա:— **Տողերը՝** 20:— **Գծումները՝** թուղթն ինքնին
գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Ձարդագրություն՝**
չունի:— **Գրիչը՝** Աստղիկ վարդապետ Ղազարյան, հե-
տագայում արքեպիսկոպոս (1909—1978):— **Ժամա-
նակը՝** 1947—1948 թթ.:— **Վայրը՝** Խարբին (Չինաս-
տան):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է
Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ստորև տրվում է հեղինակի կողմից նոթագրված
հետաքրքիր տեղեկությունները միայն:

Թ. 4բ.— Խարբին, Շր. 8 նոյեմբեր 1947:

Այսօր կեսօրին ետք ունեինք հանդես Թարգման-

չաց տօնին առթիւ և Ռուսաստանի խորհրդայնաց-
ման 30-րդ տարեդարձին առթիւ: Բաւական ժողո-
վույթ եկած էր:

Թ. 11բ.— Խարբին, Շր. 22 նոյեմբեր 1947:

Ճաշէն ետք Թադոս Գրիգորիչին հետ գացինք
Միթրոպոլիտ Նեստորին մօտ շնորհաւորութեան, ո-
րուն ծննդեան տարեդարձն էր: Մեկի ջատ լաւ կեր-
պով ընդունեց: Ինծի առաջարկեց որ միասին Դայ-
րէն երթանք:

Թ. 18ա.— Խարբին, Ուր. 5 դեկտ. 1947:

Այսօր այստեղ հաւաքոյթ կար Խորհրդային կա-
ռավարութեան Ստալինեան սահմանադրական օրէնքի
տույլութեան տարեդարձին առթիւ: Մէկ-երկու ճառա-
խօսութիւններ և երգեր եղան:

Թ. 19ա.— Խարբին, Կիր. 7 դեկտ. 1947:

Ճաշին Գուրգէն Ասիրեանցի մօտ էինք: Բաւական
աղէկ ժամանակ անցուցինք: Երիտասարդաց ֆօտի
հաշտոյն հանգանակուեցաւ հարիւր հազար տեղական
իէն, հինգ հոգիներու միջև:

Թ. 21ա.— Խարբին, Եշ. 11 դեկտ. 1947:

Այսօր մօտս եկաւ չքաւոր և ծեր քահանայ մը,
ռուս և օգնութիւն խնդրեց, խոստացայ իրեն օգնել:

Թ. 21բ.— Խարբին, Ուր. 12 դեկտ. 1947:

Ռուս քահանան եկաւ մօտս, իրեն տուի կարգ մը
շորեր և հինգ հազար տեղական իէն:

Թ. 27բ.— Խարբին, Դշ. 24 դեկտ. 1947:

Այսօր հացի և այլ ուտեստեղէններու ստանալու
համար ստացանք տոմսակներ:

Թ. 29ա.— Խարբին, Շր. 27 դեկտ. 1947:

Այսօր ունեինք երեկոյան ժամը 4-ին հանդես, Հա-
յաստանի հանրապետութեան 27(րդ) տարեդարձին
առթիւ: Հրաւիրուած էին բաւական օտար հիւրեր,
օտար ապգութեանց ներկայացուցիչներ, ինչպէս նաև
Սովիէթական կառավարութեան հիւպատոսը և ուրիշ
երեք պաշտօնեաներ:

Մթնոլորտը ջատ ուրախ անցաւ: Հանդէսը բաւա-
կան յաջողութիւն ունեցաւ բարոյապէս: Երիտասարդ-
ներուն մէկ մասը մնաց այս տեղ մինչև առաւօտ:
Տրամադրութիւնս աղէկ չէր: Ես ալ բաժակաճառ խօ-
սեցայ:

Թ. 33ա.— Խարբին, Շր. 3 յունուար 1948:

* Ըարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվա-
կանի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—
Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Ե—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Ե—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—
Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի № № Ա—
Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի № № Ա-ից, Գ-ից, Ժ—ԺԲ-ից, 1983 թվականի № № Բ—Գ-ից, Է—Ժ-ից, 1984 թվականի № № Բ—Գ-ից, Ե—Զ-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1985 թվականի № № Բ—Գ-ից:

Մոսկովայից ստացանք հարցարաններ, Հայաստան գացողներու համար, որպէսզի լեցնեն:

Թ. 43բ.— Խարբին, Եր. 24 յունուար 1948:

Ուկրաինացոց գաղութի նախագահը և եկեղեցւոյն երեցփոխը եկան վիս հրաւիրելու իրենց վաղուան կատարելիք Սովետական Ուկրաինայի երեսունամեայ տարեդարձին առթիւ:

Թ. 49բ.— Խարբին, Եշ. 5 փետր. 1948:

Գացի Սովետական հիւպատոսարան, Հայաստան քրթալու համար խնդրագիր տուի:

Թ. 51ա.— Խարբին, Կիր. 8 փետր. 1948:

Երեկոյան ունէինք երեկոյթ Պետրոս Դուրեանի 75-ամեայ մահուան տարելիցին առթիւ, որ մեր երիտասարդները սարքած էին:

Թ. 62բ.— Խարբին, Ուր. 27 փետր. 1948:

Ճաշի գացի Սիմոն Էլօեանէնց, յետոյ միասին գացինք շարժասլաւների, որ կը ներկայացնէր «Արշին Մալալան»:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 31բ.— Վերջ 1947-ի:

№ 606

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 140:— Պրակները՝ 12:— Մեծութունը՝ 23.7×17.7×1.8 սմ.:— Նյութը՝ հասարակ բարակ թուղթ:— Կազմը՝ ծաղկավոր թղթով ծածկված հաստ ստվարաթուղթ:— Պաշտպանակներ՝ չունի: Վիճակը՝ լավ:— Գրութիւններ՝ միասուն:— Դատարկ թղթեր՝ չկան:— Տողերը՝ 24:— Գծումները՝ թուղթն ինքնին գծավոր է:— Գիրը՝ ջեղագիր:— Ձարդագրութիւն՝ չունի:— Գրիչը՝ Ասողիկ վարդապետ Ղապարեան, հետազայում արքեպիսկոպոս (1909—1978): Ժամանակը՝ 1948 թ.:— Վայրը՝ Խարբին (Չինաստան):— Ծանոթագրութիւն՝ ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը պարունակում է 1 մարտից մինչև 5 դեկտեմբերի 1948 թ. օրագրութիւնը, որ ամբողջությամբ գրված է Խարբինում, բացառությամբ 1948 թ. մարտի 5—9 (տեսնել թթ. 3ա—5ա) օրերը, որոնք գրված են Մանչուրիայում, ուր հեղինակն այցելել է հայկական մի պատկազրութիւն կատարելու համար:

Ստորև տրվում է հեղինակի կողմից նոթագրված հետաքրքիր տեղեկութիւնները միայն:

Թ. 3ա.— Մանչուրիա, Ուր. 5 մարտ 1948:

Երեկոյան կատարեցինք պսակի արարողութիւնը Ռուսաց եկեղեցւոյն մէջ, ի ներկայութեան ռուս խուռն բազմութեան մը: Պատկազրութեանն էտք խուռն հարսնուորներու և հրաւիրեալներու բազմութիւն մը կար հարսանեկան տունը, շատ ուրախ ժամանակ մը անցուցինք այնտեղ. տեղւոյն բոլոր հայերն ալ ներկայ էին, կային նաև բաւական թուով օտարներ:

Թ. 6ա.— Խարբին, Եշ. 11 մարտ 1948:

Այսօր Վարդանանց տօնն էր: Պատարագէն էտք ունեցանք փողքի հանդէս մը և երեկոյան երիտասարդները պարտեցան պարելով և թէյասեղան տրուեցաւ ներկաներուն:

Թ. 12ա.— Խարբին, Գշ. 23 մարտ 1948:

Ժամանակս անցուցի ռուսերէն սորվելով:

Թ. 16ա.— Խարբին, Դշ. 31 մարտ 1948:

Բացակայութեանս այստեղ եղեր են Յովհաննէսեան Արտաշէսը իր տիկնոջ և իր տղուն հետ, հրաժեշտի համար, որ վաղը պիտի մեկնի Կորեա:

Թ. 33բ.— Խարբին, Դշ. 5 մայիս 1948:

Մօտս եկաւ Ջուիցերական կաթոլիկ միս (ի) ունար վարդապետ մը որ մեկի հետ միասին նստած էր Մուկտէն կեդրոնացման վայրը, իր հետ քերաւ նաև մի ուրիշին, յետոյ կանչեցի Եակոբ Հայմիչ Քրասնովին (որեւ բարեկամ մը, որուն հետ միասին Մուկտէն քէմքն էինք): Ճաշի իմ մօտս էին:

Թ. 34բ.— Խարբին, Ուր. 7 մայիս 1948:

Կիրակի օրուան լրագիրի մէջ փոքրիկ յօդուած մը տուինք մեր Ապրիլի նահատակաց յիշատակին առթիւ:

Թ. 36բ.— Խարբին, Գշ. 11 մայիս 1948:

Ճաշի գացի Էլօեան Սիմոնէնց և Պրետտան մի քիչ դրամ հաւաքեցի Ջուիցերացի միս (ի) ունէրներու համար:

Թ. 40ա.— Խարբին, Գշ. 18 մայիս 1948:

Այսօր արտաքին գործոց նախարարութեան ընկերական բաժնի կողմէ եկան ինծի յայտնեցին, որ իբր ներկայացուցիչ անգլիացի և ամերիկացի բնակիչներու կողմէ Խարբինի, ներկայ գտնուիմ ամսոյս 24-ին տեղի ունենալիք միջազգային միջինկին:

Թ. 40բ.— Խարբին, Դշ. 19 մայիս 1948:

Մօտս եկած էր Ճաշի կաթոլիկ Ջուիցերացի միս (ի) ունէր <(այր) Ռուս, որուն յանձնեցի 160.000 հաւար տեղական ելեւէ, որ հաւաքած էի հայերէն:

Թ. 46ա.— Խարբին, Կիր. 30 մայիս 1948:

Երեկոյան ունէինք մեր ազգային սրահի մէջ Անուշ օպերայ, ներկայացուած մեր երիտասարդներու կողմէ, դերասանները բաւական աղէկ կատարեցին իրենց դերերը: Ներկայացումէն ետքը, երիտասարդները շարունակեցին մինչև առաւօտ պարել: Բաւական շատ ժողովուրդ եկած էր և բաւական ալ օտարներ կային:

Թ. 51ա.— Խարբին, Դշ. 9 յունիս 1948:

Այսօր հեռաձայնով յայտնեց Թադոս Գրիգորիչը, որ Աշոտ Տէր Յակոբեանին երէկ տարեր են անծանօթ մարդիկ ինքնաշարժով և դեռ հետքը անյայտ կը մնայ:

Թ. 52ա.— Խարբին, Ուր. 11 յունիս 1948:

Գացի Սովետական հիւպատոսարանը Աշոտ Տէր Յակոբեանի համար. հիւպատոսը ըսաւ, որ ձեռք առած են արդէն պէտք եղածը ստուգելու համար անոր դրութեան որպիսութիւնը:

Թ. 53բ.— Խարբին, Բշ. 14 յունիս 1948:

Օրուան նորութիւնն էր. Էջգարխ Նեստորին ձերբակալութեան լուրը, իր ուղեկիցներուն հետ միասին, որ շուտով պիտի երթան Մոսկովա:

Թ. 54ա.— Խարբին, Գշ. 15 յունիս 1948:

Այսօր քաղաքի մեջ լուր տարածուեց, որ ինձ ևս ձերբակալված եմ:

Թ. 63բ.— Խարբին, Կիր. 4 յուլիս 1948:

Ժամը 10.30-ին սկսանք պատարագի: Ժողովուրդը քիչ եկած էր: Այսօր Կաթուղիկէ Ս. Էշմիածնի տօնն էր:

Թ. 70բ.— Խարբին, Կիր. 18 յուլիս 1948:

Այսօր երգողներ չի լինելու պատճառաւ պատարագ չկրցինք ընել: Տրամադրութիւնս շատ աղէկ էր:

Թ. 84ա.— Խարբին, Շբ. 14 օգոստ. 1948:

Երեկոյան հաւաքուեցան հոգաբարձութեան անդամները. նկատի առնելու համար եկեղեցական կարգ մը խնդիրներ, տնօրինութեան վերաբերեալ, տեղական կառավարութեան հարցարանի մը պատասխանելու առթիւ:

Թ. 86բ.— Խարբին, Եշ. 19 օգոստ. 1948:

Այսօր Հմայեակ Էլիասեանի յիշատակի մարմարեայ տախտակը եկեղեցիի պատին վրայ հաստատեցինք:

Թ. 87բ.— Խարբին, Շբ. 21 օգոստ. 1948:

Սլաւեան լեւուի Ա. Բ. Գ. սկսայ սորվիլ:

Թ. 91բ.— Խարբին, Կիր. 29 օգոստ. 1948:

Այսօր Ածածնայ վերափոխման տօնն էր: Բաւական ժողովուրդ եկած էր եկեղեցի: Պատարագի ընթացքին քարոզեցի, յետոյ պատարագէն ետք կարգով կատարեցինք խաղողօրհնութեան արարողութիւնը, անդաստան և հանգստեան կարգ:

Թ. 99ա.— Խարբին, Բշ. 13 սեպտ. 1948:

Կէսօրէն յետոյ փնտրները սկսան խրամներ փորել օդային ուժակոծութեան դէմ մեր պարտէլի մէջ:

Թ. 100ա.— Խարբին, Դշ. 15 սեպտ. 1948:

Սովի վտանգ կ'սպառնայ Խարբինին:

Թ. 122բ.— Խարբին, Շբ. 30 հոկտ. 1948:

Ջբաղեցայ ընթերցանութեամբ, ռուսերէն սորվելով պարապեցայ, Մարթա Իվանովնան եկած էր, քիչ մը ինծի օգնեց ռուսերէն քերականական բառերու ծանօթագրութեամբ:

Թ. 137բ.— Խարբին, Բշ. 29 նոյեմբեր 1948:

Այսօր Սովեթական Հայաստանի 23-րդ տարեդարձին առթիւ Երեկոյան ունէինք մեծ շուքով հանդէս և թէյստեղան ծրագրի երաժշտական և ճաշասուսական բաժնէն ետքը, երեկոյան ժամը 7-ի առնենք:

Հրաւիրուած էին բաւական պաշտօնական հիւրեր, Սովեթական հիւպատոսը իր արքանեակով, Ուքրաինացու, Ռուսաց, Վրաց և Թաթարաց ազգային ներկայացուցիչները, լրագրութեան թղթակիցները և խըմբազիրը, զանազան երիտասարդաց ակումբներու, ամերիկական տանց բոլոր ներկայացուցիչներով, մօտաւորապէս երեսուն հինգ հոգի պաշտօնական հրաւիրեալներ իրենց տիկիններու հետ միասին եկած էին: Մասնաւոր նուագածուներ վարձուած էին օրուան առթիւ:

Թ. 138ա.— Խարբին, Գշ. 30 նոյեմբեր 1948:

Ամբողջ գիշերը անքուն անցուցինք: Հրաւիրեալները հեռացան բոլորն ալ ուշ գիշեր և երիտասարդներուն մէկ մասը մնաց մինչև լոյս և պարելով ու ուտել խմելով անցուց ժամանակը: Տրամադրութիւնս

քիչ մը աղէկ էր, բայց յոգնած էի և ցերեկը քիչ մը քնացայ:

№ 607

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 208:— Պրակները՝ 13:— Մեծութիւնը՝ 20.3×13.3×2.8 սմ.:— Նյութը՝ դիմացկուն սպիտակ մաքուր թուղթ:— Կազմը՝ կարմիր մոմաթով ծածկված բարակ սովաբաթուղթ, որի վրա երկու տեղ ուկեգույնով տպված է 1955 թվականը:— Պահպանակները՝ սկզբում և վերջում մեկական հաստ թուղթ:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միասույն:— Դատարկ թղթերը՝ 1ա—8բ, 192բ—208բ:— Տողերը՝ 25:— Գծումները՝ թուղթի ինքնին գծավոր է:— Գիրը՝ շեղագիր:— Զարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ Ասողիկ վարդապետ Ղազարյան, հետագայում արքեպիսկոպոս (1909—1978):— Ժամանակը՝ 1955 թ.:— Վայրը՝ Սիդնի (Ավստրալիա):— Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը պարունակում է 1 հունվարից մինչև 31 դեկտեմբերի 1955 թ. օրագրությունը, ամբողջությամբ գրված Սիդնիում, բացառությամբ 1955 թ. փետրվարի 19-ից մինչև մարտի 3 (տեսնել թթ. 33բ—39բ), որոնք գրված են Մելբորնում (փետր. 27—28 և մարտի 1-ին այցելել է Ատելայիտ), տեղի հայերին տրված այցելության առթիվ:

Ստորև արվում է հեղինակի կողմից նոթագրված հետաքրքիր տեղեկությունները միայն:

Թ. 13ա.— Սիդնի, Կիր. 9 յուլուար 1955:

Առաջին պատարագը ըրինք Սիդնիի մէջ, շուրջ հարիւր հոգի եկած էին, քարոզեցի և վերջին ջրօրհնէքի արարողութիւն կատարեցինք: Բաւական ժողովուրդ եկած էր: Եկեղեցիէն յետոյ գացինք տնօրինէքի: Բաւական յոգնեցայ այսօր: Տասներկու տուն օրհնեցի: Պատարագին քարոզեցի:

Թ. 25բ.— Սիդնի, Եշ. 3 փետրուար 1955:

Կէսօրէն յետոյ գացինք եկեղեցիի համար հող տեսնելու:

Թ. 28ա.— Սիդնի, Գշ. 8 փետրուար 1955:

Ունեցանք ժողով և որոշեցինք գնել հողը:

Թ. 34ա.— Մելբորն, Կիր. 20 փետրուար 1955:

Պատարագեցի, քարոզեցի, Մելբորնի YWAC-ի սրահին մէջ, առաջին անգամ ըլլալով, գրեթէ զադութիւն բոլոր հայերը ներկայ էին: Պատարագէն յետոյ ժողով մը գումարեցինք: Ընտրեցինք վեց հոգի՝ բաղկացած յանձնախումբ մը, որպէսզի գաղութը կազմակերպեն: Անդամներն են...

Թ. 36ա.— Մելբորն, Եշ. 24 փետրուար 1955:

Այսօր առտուն ժամը 10-ին այցելեցի, Պ. Նուպար Ըալճեանին հետ, Մելբորնի Անգլիքան եպիսկոպոսին, շատ լաւ ընդունելութիւն ըրաւ, խոստացաւ որ յառաջիկային եթէ պէտք ունենանք մկի եկեղեցի մը յատկացնէ:

Թ. 58բ.—Սիտնի, Կիր. 10 ապրիլ 1955:

Այսօր Ձատիկ էր: Պատարագեցի, քարոզեցի և անդատան կատարեցի: Եկեղեցին բառական ժողովուրդ ունեինք և մեծ ոգևորություն:

Վահագն Ակինեանին մօտ եկեղեցիին ի նպաստ հանգանակեցինք 180, իսկ իրիկունը 50 բառուտ Ռիբիի գործարարին մեջ սարքուած երեկոյթին: Շատ յուզուեցայ ոգևորութեան ստեղծած արդիւնքէն:

Թ. 65ա.— Սիտնի, Եթթ. 23 ապրիլ 1955:

Այսօր նամակ մը գրեցի Գալուստ Կիւլակեկեանին Աստուրալիոյ մէջ եկեղեցի մը շինելու համար:

Թ. 65բ.— Սիտնի, Կիր. 24 ապրիլ 1955:

Պատարագեցինք, քարոզեցի և հոգեհանգստեան պաշտօն կատարեցի մեր ընդհանուր նահատակներուն համար:

Բառական ժողովուրդ եկած էր եկեղեցի:

Թ. 66ա.— Սիտնի, Բշ. 25 ապրիլ 1955:

Այսօր կէսօրին զացինք անծանօթ փնտրողին գեղեցիկ միայ ծաղկեպսակ մը դրինք և հոգւոց մը արտասանեցինք: Մեր եկեղեցիին կողմէ:

Բառական տպաւորիչ եղաւ:

Թ. 92բ.— Սիտնի, Ուր. 17 յունիս 1955:

Իրիկունը սահմանադրութեան (այսինքն համայնքի կանոնագիրը—Ն. Մ.) ժողով ունեինք: Բառական անհաճոյ և փոթորկալի եղաւ ժողովը:

Թ. 97բ.— Սիտնի, Բշ. 27 յունիս 1955:

Կէսօրէն յետոյ այցելեցի Անգլիքան եպիսկոպոսին, Տիար Բանիկեանի հետ միասին: Շատ լաւ ընդունեց փա: Անկէ զացի World Council of Churches-ի օֆիսը հայեր (ու) ներգաղթելու խնդրով:

Թ. 128ա.— Սիտնի, Եթթ. 27 օգոստոս 1955:

Կէսօրէն յետոյ ժամը 3-ին ունեցանք ազգային ընդհանուր ժողով, բառական մարդիկ հաւաքուած էին, բայց ձաւացիները բոլոր բաժնուեցան և ձաւատը ճեղքեցին: Տաճկահայերը սակայն մեծամասնութիւն կազմեցին:

Թ. 130բ.— Սիտնի, Եշ. 1 սեպտեմբեր 1955:

... Նամակ մըն ալ գրեցի Սիտնիի Անգլիքան արքեպիսկոպոսին մեզի եկեղեցի մը տրամադրելու համար:

Կէսօրէն յետոյ զացինք Բանիկեանի և Հանէսեանի հետ միասին փաստաբանի կանոնագրի հաստատման համար:

Թ. 142ա.— Սիտնի, Եթթ. 24 սեպտ. 1955:

Նամակ մը ստացայ Տիրայր վարդապետէն, որ կը գրէր թէ կերթան Հայաստան կաթողիկոսական ընտրութեան:

Շատ ցաւեցայ, որ պիտի չկրնամ երթալ, քանի որ վիզա չկրցայ ստանալ Էշմիաձէնէ:

Թ. 151ա.— Սիտնի, Դշ. 12 հոկտ. 1955:

Ճաշի զացի Ակինեանին մօտ, հոն էր նաև Գեորգ Շալճեան: Բառական խօսեցանք եկեղեցի մը շինելու կամ ունենալու մասին, իրենք բացասական գաղափար ունեին եկեղեցւոյ շինութեան մասին, իսկ ես պնդեցի որ պիտի շինեմ:

Թ. 153բ.— Սիտնի, Բշ. 17 հոկտ. 1955:

Նամակ մը ստացայ Վանան Ալթունեանէն, որը

կը գրէր որ կաթողիկոս ընտրած են Էշմիաձէնայ Տէր Վազգէն Եպիսկոպոսը, Պուլկարիոյ առաջնորդին:

(Կրկին այցելում է Մելպըրն, Մոնթկեմպիեր և Ատելայիտ 1955 թ. հոկտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 6-ը: Տեսնել թթ. 155բ.—163բ.):

Թ. 156բ.— Մելպըրն, Կիր. 23 հոկտ. 1955:

Այսօր պատարագեցինք Մելպըրնի Անգլիքան եկեղեցիի մը մէջ, քարոզեցի: Տեղւոյն հայ գաղութը մեծաւ մասամբ ներկայ էր: Հոգեհանգստ ա կատարեցինք: Պատարագէն յետոյ զացինք բոլոր հայերս ևս (որէն) Ակինեանի մօտ ճաշի: Շատ աղէկ ժամանակ ունեցանք հոն: Խորէն Ակինեանի տան մէջ պսակի արարողութիւնը կատարեցի Տէր և Տիկ. Բարսեղեաններու:

Թ. 161բ.— Մելպըրն, Դշ. 2 նոյեմբեր 1955:

Առտուն ժամը 6-ին ճամբայ ելանք Ատելայիտէն և Գրիգորեանը եկած էր մեզի ճամբու դնելու: Թօնկուրեանը լաւ ու անվտանգ հասցուց մեզի Մելպըրն: Ճամբան հանդիպեցայ Արարատ քաղաքի մատենադարանը. անտեցմէ հասկնալու համար Արարատ քաղաքի ծագման մասին:

Թ. 165բ.— Սիտնի, Եշ. 10 նոյեմ. 1955:

Այսօր նամակ մը գրեցի Հայկապոն եպիսկոպոս Աբրահամեանին և շնորհաւորեցի իր եպիսկոպոսացումը:

Նամակ մը ստացայ Երուսաղէմէն, Տիրան Սրբապետէն, որ փա Երուսաղէմ կը հրավիրէ:

Թ. 173ա.— Սիտնի, Դշ. 23 նոյեմբեր 1955:

Հանէսեանը թեղեֆօն ըրաւ և յայտնեց թէ տեսած է Անգլիքան եկեղեցիի Դիւանապետը, որը խոստացած է տալ մեզի եկեղեցի մը:

Թ. 183ա.— Սիտնի, Գշ. 13 դեկտ. 1955:

(Վահան) Հանէսեանը թեղեֆօն ըրաւ որ հողի խնդրով դիմում կատարած է և նմանապէս եկեղեցիի խնդրով: Վաղը մեզի տեղեկութիւն պիտի բերէ:

Թ. 192ա.— Սիտնի, Եթթ. 31 դեկտ. 1955:

Անցուցինք վերջապէս հին տարին, իր բոլոր ծանր և նոյն ատեն աշխարհին համար խաղաղութեան մեղմ շունչով մը լաւագոյն խոստումներով ակադեմի, կը մնայ Նոր Տարւոյն վայել աւելի յաւերժացնելու և մարդկութեան երջանկաբեր շրջան մը ստեղծելու յոյսերը: Կաղօթենք և կը մաղթենք ի Տեսունէ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Տեղ-տեղ նշված են այն քաղաքների անունները, որտեղ այցելել է մատյանի հեղինակը, այսպես օրինակի համար)

Թ. 9ա.— Սիտնի:

Թթ. 37բ և 38ա.— Ատելայիտ:

Թ. 39բ.— Մելպըրն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրում գտնվում է անգլերենով տպված ամերիկյան մի քարտ, 2 հունվարի 1954 թվականով, որտեղ նշված են Աստղիկ վարդապետի անունն ու ազգանունը, ծննդավայրը, հպատակությունը, Լոս Անջելոսի հասցեն և մի շարք այլ տվյալներ:

№ 608
ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թերթերը՝ 193:— **Պրահները՝ 14:**— **Մեծությունը՝** 20.7×13×2.1 սմ.:— **Նյութը՝** բարակ թուղթ:— **Կազմը՝** մոխրագույն թղթով ծածկված ստվարաթուղթ, որի վրա անգլերեն գրություն կա (տետրի գործարանի անունը, թվականը և այլն):— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական մոխրագույն թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապուն:— **Դատարկ թղթերը՝** 2ա—2բ, 185բ—193բ:— **Տողերը՝** 30:— **Գծումները՝** թուղթի ինքնին գծավոր է:— **Գիրքը՝** շեղագիր:— **Չարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Աստղիկ վարդապետ Ղազարյան, հետագայում արքեպիսկոպոս (1909—1978): **Ժամանակը՝** 1957 թ.:— **Վայրը՝** գլխավորապես Երուսաղեմ, ինչպես նաև բազմաթիվ այլ վայրեր (Բեյրութ, Դամասկոս, Հալեպ, Մոսկվա, Էջմիածին, Ծայրագույն Արևելք և այլն):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրի սկզբի մեծագույն մասը (թթ. 1ա—132բ) գրված է Երուսաղեմում (1957 թ. հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 17), սակայն այս ընթացքում կարճ ժամանակով հեղինակը այցելել է Բեյրութ, Դամասկոս և Հալեպ: Օրը-օրին գրված օրագրությունը շարունակել է այդ քաղաքներում:

Սեպտեմբերի 17-ին Աստղիկ վարդապետը Երուսաղեմից մեկնել է Բեյրութ, որից հետո Սոֆիայի և Մոսկվայի վրայով նույն ամսի 30-ին ժամանել է Երևան և Մայր Աթոռ: Նոյեմբերի 24-ին նա եպիսկոպոս է օծվել: Նույն ամսի 30-ին նա Երևանից մեկնել է Մոսկվա, ապա այնտեղից ուղևորվել դեպի Հնդկաստան և Ծայրագույն Արևելք:

Ստորև տրվում է հեղինակի կողմից նոթագրված մի շարք հետաքրքիր տեղեկությունները միայն:

Թ. 42ա.— Երուսաղեմ, Դ. 20 մարտ 1957:

Այսօր առառու ժամը 11-ին Միաբանական ընդհանուր ժողով գումարուեցաւ 24 հոգիի ներկայութեամբ և 20 ձայնով պատրիարք ընտրեցինք Տիրան Արքեպիսկոպոսը: Միաբանութիւնն ու ժողովուրդը շատ ուրախ էր այսօր: Գիշերը մինչև ուշ ատեն խրախճանք տեղի ունեցաւ ժողովուրդին մէջ:

Թ. 44բ.— Երուսաղեմ, Բ. 25 մարտ 1957:

Այսօր լուսարարապետի ընտրութիւն կատարուեցաւ և Շնորհք եպիս. ընտրուեցաւ լուսարարապետ 12 քունով: Այս ընտրութեան եւ շատ համաձայն ու կողմնակից չէի: Աշխատեցանք Հայկապոն եպիսկոպոսի ընտրութեան համար, բայց չի յաջողեցանք:

Թ. 58ա.— Երուսաղեմ, Կիր. 21 ապրիլ 1957:

Այսօր մեզի ալ Ձատիկ է: Գիշերը ժամը 1-ին եղանք և գացինք ամբողջ միաբանութեամբ Ս. Յարութիւն և ժամերգութիւն ըրինք թափօր դառնալով, Լպտիներու և Ասորիներու հետ միասին: Պատարագ մատուցուեցաւ Ս. Գերեզմանին վրայ:

Թ. 61ա.— Երուսաղեմ, Եթ. 27 ապրիլ 1957:

Հայկապոն եպիսկոպոս և Միւռոն վարդապետ գացին Ամման թագաւորին իրենց հայտակութիւնը յայտնելու համար:

Թ. 62ա.— Երուսաղեմ, Բ. 29 ապրիլ 1957:

Նամակ մը ստացայ Միւռնիէն, Ալէքսանտր Մատթովէն: Ստացայ նաև Միւռնիի մեր ամսագիրը «Լոյս»-ը:

Թ. 64ա.— Երուսաղեմ, Ուր. 3 Մայիս 1957:

Պատրիարք Սրբազան խոստացաւ որ իմ մասին գրէ Էջմիածին Կաթողիկոսին, եպիսկոպոսութեան համար:

Թ. 70ա.— Երուսաղեմ, Դ. 15 մայիս 1957:

Իրիկունը քովս եկան Հայկապոն եպիսկոպոսը, Ջաւէն և Կիւրեղ վարդապետները, խորհրդակցելու համար որ ունէ կուսակցական կազմակերպութեան սենեակ չտրամադրեն: Նմանապէս Սուրբ տեղերու խնդիրները Պատրիարքը ինքնագլուխ չի կարգադրէ: Թ. 89բ.— Երուսաղեմ, Կիր. 23 յունիս 1957:

Գիշերը ժամը 9.30-ին Հայաստանէն ռատիոյի վրայ տրուեցաւ Կաթողիկոսի պատարագը և քարոզը:

Թթ. 118ա—119ա.— (Ավստրալիա մեկնելու և Հայաստան այցելելու մուտքի վիճակի համար երկու օրով այցելել է Բեյրութ):

Թ. 121ա.— Երուսաղեմ, Կիր. 25 օգոստոս 1957:

Հայաստանէն Կաթողիկոսը քարոզ խօսեցաւ ռատիոյով և հոգեհանգիստ կատարեցին Էջմիածնի Մայր Տաճարին մէջ Գալուստ Կիւպէնկեանի մանուկ տարեկիցին առջիկ:

Թ. 130ա.— Երուսաղեմ, Ե. 12 սեպտեմբեր 1957:

Աստրալիոյ «Լոյս» ամսագիրը տեսայ այսօր, որը ինծի համար հետաքրքրական էր իր տեղեկութիւններով:

Թ. 132բ.— Պէյրութ, Գ. 17 սեպտ. 1957:

4:45ի (ն) Middle East օդանաւով ճամբայ եղանք դէպի Պէյրութ և իրիկունը ժամը 7.30-ին հասանք Regent Hotel: Ճամբորդութիւնը շատ յաջող և հաճելի անցաւ:

Թ. 135ա.— Սօֆիա, Կիր. 22 սեպտ. 1957:

Հայկապոն եպիսկոպոսին հետ ժամը 8-ին ճամբայ եղանք օդային գիծով, Դամասկոս, Աթէնք և Սօֆիա հասանք իրիկունը ժամը 5.30-ի ատենները և հոն օդակայանի պանդոկի մէջ իջանեցանք պովկարական վիպա չունենալու համար:

Թ. 135բ.— Մոսկուա, Բ. 23 սեպտ. 1957:

Սօֆիայի օդակայանը հանդիպեցանք Ալէքսէյ Պատրիարքին Մոսկուայի և Պովկարիոյ Պատրիարքին և մեծ թուով եկեղեցականներուն, որոնք եկած էին ճամբու դնելու Ալէքսէյ Պատրիարքը: Պատրիարքին և իր ջբախտմբին հետ ճամբորդեցինք Պովկարէտ, ուր դիմաւորութեան եկած էին Ռուսիայի Պատրիարքը օդակայան իր եկեղեցական դասով: Մինչև Օտեսայ միասին ճամբորդեցինք, ուր Ալէքսէյ Պատրիարքը վար իջաւ և քաղաք գնաց: Քիչով ընթերցինք և ճամբանիս շարունակեցինք միւշն Մոսկուա: Պարզև վարդապետը եկած էր դիմաւորութեան և մեզի բերաւ Լենինկրատսկայա պանդոկը:

Թ. 139ա.— Ս. Էջմիածին, Բ. 30 սեպտ. 1957:

Առտուն ժամը 6-ին ճամբայ ելանք և հասանք Երևանի օդակայանը, մեկի դիմադրության եկած էին Հայրիկ վարդապետը և Հայկ Առաքելեանը: Քաղաքի մեջ պտոյտ մը կատարելէն ետք եկանք Ս. Էջմիածին, ուխտ ըրինք Իջման սեղանին առջև, վերջէն վեր ելանք Վեհափառը և Վեհափառ Հայրապետին աջը առինք: Վեհափառին հետ ճաշեցինք կեսօրին: Ճաշէն յետոյ քիչ մը հանգստացանք: Իրիկունը վարդապետին հետ վանքին բակը պտտեցինք:

Թ. 139թ.— Ս. Էջմիածին, Գշ. 1 հոկտ. 1957:

Առտուն եկեղեցի գացինք: Նախաճաշին Վեհափառի մօտն էինք: Վեհափառին տուի նամակներ, ինչպէս նաև եպիսկոպոսութեան վկայական: Գացինք դպրոց Վեհափառին հետ և ամբողջ միաբանութեան, Հայկապոլսի եպիսկոպոսը իբրև տեսուչ ներկայացուց Վեհափառը աշակերտութեան:

Թ. 140թ.— Ս. Էջմիածին, Դշ. 2 հոկտ. 1957:

Իրիկունը Վեհափառին հետ Հայկապոլսի եպիսկոպոսի, Վեհափառի և Մեսրոպ վարդապետ այցելեցինք Աւետիք Իսահակեանին իր ծննդեան տարեդարձին առթիւ:

Թ. 145թ.— Ս. Էջմիածին, Եթթ. 12 հոկտ. 1957:

Այսօր պատարագեցի Մայր Տաճարի Աւագ սեղանին վրայ, Թարգմանչաց տօնին առթիւ: Վրաց Մելքիսեդէկ Կաթողիկոսը եկաւ Էջմիածին և պինքը մեծ շուքով ընդունեցինք:

Թարգմանչաց տօնին առթիւ դասախօսութիւն մը տեղի ունեցաւ, գլխաւոր խօսողը եւ էի ձեմարանի սրահին մէջ աշակերտներուն համար ի մասնաւորի:

Թ. 145թ.— Ս. Էջմիածին, Կիր. 13 հոկտ. 1957:

Այսօր տօնեցինք Վեհափառի գահակալութեան տօնը: Պատարագեց Մամբրէ Սրբազան Գալֆանան և քարոզեց: Պատարագէն ետք մաղթանք տեղի ունեցաւ, յետոյ Ծաղկեայ դպիւղճը ելանք, ճառախօսութիւններ տեղի ունեցան:

Թ. 147թ.— Ս. Էջմիածին, Եշ. 17 հոկտ. 1957:

Աւետիք Իսահակեանը մեռաւ այսօր առտուն ժամը 11-ին առէններ:

Թ. 148թ.— Ս. Էջմ., Ուրբ. 18 հոկտ. 1957:

Ճաշէն յետոյ գացինք Աւետիք Իսահակեանի տունը, իր ընտանիքին ցաւակցութեան. մեզի հետ էր նաև (Ի) Սահակ Արքեպիսկոպոսը և Վեհամարը:

Թ. 149թ.— Ս. Էջմ., Կիր. 20 հոկտ. 1957:

Պատարագեցի և քարոզեցի Մայր Տաճարի մէջ: Ըստ ժողովուրդ եկած էր եկեղեցի:

Իմ չինացի ժողովուրդս (Զինաստանի հայերից—Ն. Մ.) եկած էր ի մասնաւորի. ջուրջ քսան հոգի և ուրիշ քանի մը մարդիկ:

Թ. 150թ.— Ս. Էջմ., Գշ. 22 հոկտ. 1957:

Աւետիք Իսահակեանին թաղումը կատարուեցաւ: Թաղման հարիւրհազարաւոր ժողովուրդ եղած են, հակառակ աննպաստ օդին:

Թ. 155թ.— Ս. Էջմ., Ուրբ. 1 նոյ. 1957:

Հեռագիր մը եկած էր Սիւնիի Հայ Եկեղեցական Խորհուրդէն, որ գալ կիրակի եկեղեցի պիտի օծեն Սիւնիի մէջ, Դերենիկ Եպիսկոպոսի ձեռամբ:

Թ. 158թ.— Ս. Էջմ., Եշ. 7 նոյեմ. 1957:

Առտուն Վեհափառի, Ս. Սահակ և Հայկապոլսի Սըրբազաններու և Եղիշէ ու Մեսրոպ վարդապետներու հետ միասին գացինք Լենինի հրապարակը, մասնաւոր հրաւիրուած ըլլալով Հայաստանի կառավարութեան կողմէ, ներկայ եղանք պիւտրական, ժողովորդական և մարդկական հանդիսութեանց ու տողանցներուն, որոնք տևեցին ժամը 10—2-ը:

Թ. 160թ.— Ս. Էջմ., Գշ. 12 նոյեմ. 1957:

Իրիկունը գացի Հրաչիկ Ռոստ (ո) մեանցի մօտ, ուր եկած էին նաև քանի մը ուրիշ չինահայեր:

Թ. 161թ.— Ս. Էջմ., Եշ. 14 նոյեմ. 1957:

Ժամը 4-ին դասախօսութիւն մը ունեցաւ Զինաստանի ճամբորդութեան մասին 1937-ին և այնտեղի գործ (ու) նեութեանս վերաբերմամբ:

Թ. 163թ.— Ս. Էջմ., Կիր. 17 նոյեմ. 1957:

Այսօր Վեհափառ Հայրապետը պատարագեց Էջմիածնայ Աւագ խորանը և քարոզեց Խրիմեան Հայրիկին մահուան յիսունամեակի առթիւ և երեկոյեան Ռատիոյ Երևանը ձայնասփռեց արարողութիւնն ու քարոզը:

Թ. 166թ.— Ս. Էջմ., Կիր. 24 նոյ. 1957:

Այսօր օծուեցանք Եպիսկոպոս, Բաբգէն վրդ. Վարժապետեանի և Կոմիտաս վարդապետ Տէր Մարտիրոսեանի (պետք է լինի Ստեփանեան—Ն. Մ.) հետ, պատարագէն յետոյ ճաշի էինք Վեհափառ Հայրապետի հետ:

Թ. 167թ.— Ս. Էջմ., Գշ. 26 նոյ. 1957:

Եպիսկոպոսական առաջին պատարագս մատուցի Իջման սեղանի վրայ և քարոզեցի: ...Ինծի այցելեցին Զինաստանի հայերը:

Թ. 169թ.— Եթթ. 30 նոյեմ. 1957 (Ժամանում է Մոսկվա—Ն. Մ.):

Թ. 172թ.— Եշ. 5 դեկտ. 1957 (Ժամանում է Տաշքենտ—Ն. Մ.):

Թ. 173թ.— Եթթ. 7 դեկտ. 1957 (Ժամանում է Քարոյ—Ն. Մ.):

Թ. 173թ.— Կիր. 8 դեկտ. 1957 (Ժամանում է Նոր Դելի—Ն. Մ.):

Թ. 175թ.— Դշ. 11 դեկտ. 1957 (Ժամանում է Կալկաթա—Ն. Մ.):

Թ. 176թ.— Կալկաթա, Ուրբ. 13 դեկտ. 1957:

Իրիկունը ներկայ եղաւ Կալկաթայի հայոց եկեղեցական խորհուրդի ժողովին և անոնց յայտնեցի Վեհափառ Հայրապետին կարգադրութեան մասին, Հեռաւոր Արևելքի թեմերու վերաբերմամբ (Ասողիկ եպիսկոպոս նշանակվել է Հայրապետական պատմիչական Ծայրագույն Արևելքի հայոց թեմի—Ն. Մ.) և անոնք միաձայնութեամբ ընդունեցին:

Թ. 177թ.— Կալկաթա, Կիր. 15 դեկտ. 1957:

Պատարագեցի, Կոնդակը կարդացուեցաւ, Տէր Արամայիս քահանայի միջոցաւ, քարոզեցի Կալկաթայի հայերուն, քարոզս շատ տպաւորիչ էր: Բաւական ժողովուրդ եկած էր եկեղեցի:

Թ. 182թ.— Դշ. 25 դեկտ. 1957 (Ժամանում է Սինգապուր—Ն. Մ.):

Թ. 183թ.— Սինգապուր, Եթթ. 28 դեկտ. 1957:

Ժամը 3-ին եկեղեցի գացինք, պատարագի կար-

գաղութներն ըրինք, թեյասեղան կար, թեյասեղանէն յետոյ ժամերգութիւն և խոստովանանք և ժողով: Ժողովուրդ քիչ էր եկած:

Թ. 184ա.— Սինգապուր, Կիր. 29 դեկտ. 1957:

Պատարագեցի Սինկապուրի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, Վեհափառի կոնդակը կարդաց Տէր Արամայիս քիյ. Միրզաեանը, եւ քարուպեցի: Պատարագէն ետք ունեցանք ժողով և միաձայնութեամբ հաւանութիւն տուին Վեհափառի կարգադրութեան:

Ժամը 2-ին եկանք օղակայան, ճամբու դնելու եկած էին բաւական ազգայիններ: Երեկոյեան ժամը 6-ին ատեններ հասանք ձակարթաւ. դիմատրութեան եկած էին տեղւոյն ազգայինները:

Թ. 184բ.— Սուրաբայա, Բշ. 30 դեկտ. 1957:

Ժամը 3.40-ին ճամբայ ելանք Տէր Արամայիսին հետ դէպի Սուրաբայա: Տեղւոյն գաղութի ազգայինները եկած էին մեզի դիմաւորելու, պանդոկ տարին, եկեղեցիի մէջ Հրաշափառ երգելէն ետք: Գիշերը մեզի ընթրիք տուաւ պանդոկի մէնճըրը Պ. Նահապետեանը, եկեղեցւոյ խորհուրդի անդամներուն հետ միասին:

Թ. 185ա.— Սուրաբայա, Գշ. 31 դեկտ. 1957:

Ժամը 10-ին տեղւոյն վարչութեան հետ ունեցանք մասնաւոր ժողով, իրենց զեկուցի Վեհափառ Հայրապետի կոնդակի և նոր կարգադրութեան մասին. սիրով ընդառաջ գնացին:

Իրիկունը ժամերգութիւն մը ըրինք:

Յորդանանեան անուն ազգայինի մը տունը հրաւիրուած էինք Նոր Տարւոյ մուտքի առթիւ:

(Չեռագրում պահպանված է Հայկապուն եպիսկոպոս Աբրահամյանի մեծ լուսանկարը, իր ընծալագրով, ինչպես նաև հինգ փոքրիկ լուսանկարներ, քաջված հավանաբար Երուսաղեմում, որտեղ երևում են Ասողիկ վարդապետ Ղազարյանը, Բաբգեն վարդապետ Վարժապետյանը և Սուրբ Հակոբի վանքի չորս երիտասարդ արքեղաներ):

№ 609

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 192:— Պրակները՝ 12:— Մեծությունը՝ 20.3×13.3×2.2 սմ.:— Նյութը՝ դիմացկուն սպիտակ մաքուր թուղթ:— Կազմը՝ կարմիր մովաթով ծածկված բարակ սովորաթուղթ, որի վրա երեսին ոսկեգույնով տպված է 1958 թվականը:— Պահպանակները՝ սկզբում կա մի հատ հաստ թուղթ:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 17բ, 32ա—33բ, 48բ, 64ա—64բ, 80բ, 96ա—96բ, 112բ, 130բ, 160բ և 176բ:— Տողերը՝ 26:— Գծումները՝ թուղթն ինքնին գծավոր է:— Գիրը՝ շեղագիր:— Չարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան (1909—1978):— Ժամառակը՝ 1958:— Վայրը՝ գլխավորապես Սիդնի, ինչպես նաև բազմաթիվ այլ վայրեր (Մոսկվա, Էջմիածին, Ծայրագույն Արևելքի պանպան քաղաքներ):— Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Նոր Վեհափառի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Չեռագիրը պարունակում է 1 հունվարից մինչև 31 դեկտեմբերի 1958 թ. օրագրությունը, որ մեծ մասամբ գրված է Սիդնիում, իսկ մնացած օրերը վաճառական այլ քաղաքներում ճամփորդության և այցելությանց առթիվ:

Ստորև տրվում է հեղինակի կողմից նոթագրված հետաքրքիր տեղեկությունները միայն:

Թ. 1ա.— Սուրաբայա, Դշ. 1 յունուար 1958:

Պատարագեցի, Կոնդակը կարդաց Տէր Արամայիսը, քարուպեցի, պատարագէն ետք ջրօրինէք կատարեցին:

Երեկոյան մեռած մարդուն կարգը կատարեցինք և վայն թաղելէն ետք օղակայան գացինք վերադառնալու համար ձակարթաւ: Ժամը 2.45-ին ճամբայ ելանք, ժամը 5.30-ին հասանք ձակարթաւ:

Թ. 2բ.— Սիդնի, Եթթ. 4 յունուար 1958:

Առտուն ժամը 7-ին հասանք Բօրթ Տարվին և ժամը 4-ին հասանք Սիդնի:

Թ. 3ա.— Սիդնի, Կիր. 5 յունուար 1958:

Այսօր պատարագեցի, կոնդակը կարդացուեցաւ, քարուպեցի, վերջէն ալ ջրօրինէքի արարողութիւն կատարեցի նոր եկեղեցիի մէջ: Ամէն ինչ աղէկ անցաւ:

Թ. 21ա.— Սիդնի, Կիր. 9 փետրուար 1958:

Պատարագեցի, Հայրապետական մաղթանք կատարեցինք, քարուպեցի. Վարդանանց տօն ըրինք և պզտիկ հանդէս մը պատարագէն յետոյ եկեղեցիի մէջ:

Թ. 23ա.— Եշ. 13 փետրուար 1958 (Ժամանում է Մելքլըն—Ն. Մ.):

Թ. 24բ.— Մելքլըն, Կիր. 16 փետրուար 1958:

Պատարագեցի, քարուպեցի, կոնդակ կարդացուեցաւ Վեհափառ Հայրապետին:

Թ. 25ա.— Բշ. 17 փետրուար 1958 (Ժամանում է Մոնթ Կեմպլեր—Ն. Մ.):

Թ. 26ա.— Դշ. 19 փետրուար 1958 (Ժամանում է Սիդնի—Ն. Մ.):

Թ. 51բ.— Սիդնի, Կիր. 6 ապրիլ 1958:

Առտուն եկեղեցի գացի, Չատիկ էր, բաւական ժողովուրդ եկած էր, քանի մը հատ ալ օտարներ կային, պատարագեցի, քարուպե անգլիկոս տուի:

Թ. 53բ.— Եշ. 10 ապրիլ 1958 (Ժամանում է Քեմքերա—Ն. Մ.):

Թ. 58բ.— Կիր. 20 ապրիլ 1958 (Ժամանում է Սինգապուր—Ն. Մ.):

Թ. 59ա.— Բշ. 21 ապրիլ 1958 (Ժամանում է ձակարթաւ—Ն. Մ.):

Թ. 63ա.— Գշ. 29 ապրիլ 1958 (Ժամանում է Սուրաբայա—Ն. Մ.):

Թ. 66բ.— Սուրաբայա, Կիր. 4 մայիս 1958:

Պատարագեցինք, քարուպեցինք և երկու հատ պատկեր օծեցինք: Պատարագէն ետք ունեցանք հաւաքոյթ, ի պատիւ ինծի և ի պատիւ Եղրաս Սարկաւգի 30 տարուան եկեղեցիի մէջ կատարած ծառայութեան:

Թ. 68ա.— Դշ. 7 մայիս 1958 (Ժամանում է ձա-
կարթա—Ն. Մ.):

Թ. 70բ.— Բշ. 12 մայիս 1958 (Ժամանում է Բան-
դունգ —Ն. Մ.):

Թ. 71ա.— Գշ. 13 մայիս 1958 (Ժամանում է ձա-
կարթա—Ն. Մ.):

Թ. 71բ.— ձակարթա, Դշ. 14 մայիս 1958:

Այսօր ժամը 11-ին այցելեցինք նախագահ Սու-
քառնոյին: Մեզի լաւ ընդունեց: Գրեթէ 20 վայրկեան
մնացինք մօտը:

Թ. 73բ.— Կիր. 18 մայիս 1958 (Ժամանում է Սին-
գայուր—Ն. Մ.):

Թ. 78բ.— ԴՇ. 28 մայիս 1958 (Ժամանում է
Ռանգուն—Ն. Մ.):

Թ. 85բ.— Գշ. 10 յունիս 1958 (Ժամանում է Կալ-
կաթա—Ն. Մ.):

Թ. 88բ.— Բշ. 16 յունիս 1958 (Ժամանում է Բու-
բեյ—Ն. Մ.):

Թ. 91բ.— Բուբեյ, Կիր. 22 յունիս 1958:

Այսօր պատարագեցի և քարոզեցի Բումպեյի Հա-
յոց Ս. Պետրոս եկեղեցիի մէջ, տեղւոյս հայ գաղութի
անդամներուն մեծամասնութիւնը եկած էր եկեղեցի:

Թ. 100ա.— Բշ. 7 յուլիս 1958 (Ժամանում է Կալ-
կաթա—Ն. Մ.):

Թ. 104ա.— Կալկաթա, Գշ. 15 յուլիս 1958:

Այսօր այցելեցինք Կալկաթայի Մեծ Նախարարին
և իրեն հետ յուսանկարուեցանք, իմ հոս մնալու վի-
զայիս համար դիմեցինք:

Թ. 105ա.— Եշ. 17 յուլիս 1958 (Ժամանում է
Չինսուրա—Ն. Մ.):

Չինսուրայի մեր եկեղեցին շատ գեղեցիկ էր, ու-
նէր ընդարձակ շրջապատ, բայց ոչ մէկ հայ չկար
հոն:

Թ. 120ա.— Կալկաթա, Ուր. 15 օգոստոս 1958:

Իրիկունը ժամը 6-ին գացինք պալատը. հրաւիր-
ուած էինք կուսակալի կողմէ, Հնդկաստանի անկա-
խութեան տարեդարձին առթիւ: Հոն ծանօթացանք
բաւական օտարներու հետ:

Թ. 123ա.— Եշ. 21 օգոստոս 1958 (Ժամանում է
Մադրաս—Ն. Մ.):

Թ. 125ա.— Մատրաս, Բշ. 25 օգոստ. 1958:

Այսօր գացինք Մատրասի տեսարժան վայրերը
տեսնելու: Նշանաւոր կամուրջը շինուած Պետրոս Ու-
կանի կողմէ, Ս. Թօմասի նահատակութեան վայրը,
որ հայկական եկեղեցի մըն էր, անոր պահուցած
այրը, ուր հայկական գերեզմանաքարեր կան, անոր
թաղուած տեղը, մեծ բասիլիքայ մը, ուր դարձեալ
հայկական գերեզմաններ և վերջապէս հայ ժողո-
վուրդի հետքերուն վրայ ամէն տեղ պատահեցանք,
մեր ազգի անմահ վաւականներուն գործերուն կեանքի
մեծագործութեանց մնացորդները տեսանք:

Թ. 126ա.— Դշ. 27 օգոստ. 1958 (Ժամանում է
Կալկաթա—Ն. Մ.):

Թ. 132ա.— Կալկաթա, Կիր. 7 սեպտ. 1958:

Իրիկունը ներկայացում կար դպրոցը «Էջմիածին»
Հայկ Նաճարեանը գրած՝ ու կազմակերպած էր Սկա-
ուսներուն ի նպաստ: Շատ լաւ անցաւ:

Թ. 143բ.— Կալկաթա, Գշ. 30 սեպտ. 1958:

Սուրէն Եպիսկոպոսէն (Քեմհաճյան—Ն. Մ.) նա-
մակ ստացալ Երուսաղէմէն, որով վիս կը կարգեն Ե-
րուսաղէմի եպիսկոպոս:

Թ. 148ա.— Գշ. 7 հոկտ. 1958 (Ժամանում է Նյու
Դելիի—Ն. Մ.):

Թ. 148բ.— Դշ. 8 հոկտ. 1958 (Ժամանում է Տաշ-
քենտ և Մոսկվա—Ն. Մ.):

Թ. 150ա.— Շրթ. 11 հոկտ. 1958 (Ժամանում է
Երևան—Ն. Մ.):

Թ. 150բ.— Ս. Էջմիածին, Կիր. 12 հոկտ. 1958:

Վեհափառ Հայրապետին ծննդեան յիսունամեակի
առթիւ և գահակալութեան երրորդ տարեիցին, խաղ
Սրբապաղը պատարագեց, Մամբրէ Եպ. Սիրունեանը
քարոզեց Էջմիածնայ Մայր Տաճարին մէջ: Վերջէն
Շաղկեայ դահլիճին մէջ շնորհատրութեան հանդէս
եղաւ: Իրիկունը հանդիսատար ճաշկերոյթ կար Ին-
թուրիստի մէջ և ճառախօսութիւններ. ես ալ խօսե-
ցայ:

Թ. 161ա.— Շրթ. 1 նոյ. 1958 (Ժամանում է
Մոսկվա—Ն. Մ.):

Թ. 163բ.— Մոսկուա, Եշ. 6 նոյեմ. 1958:

Կէսօրուան ճաշէն յետոյ հեռուստատեսի վրայ դի-
տեցինք Միկոյեանի ճառը, Նոյեմբեր 7-ին առթիւ և
յաջորդող հանդիսութիւնները:

Թ. 164ա.— Մոսկուա, Ուրբ. 7 նոյեմ. 1958:

Նախաճաշէն վերջ հեռուստատեսի վրայով դիտե-
ցինք Մոսկուայի Կարմիր հրապարակին վրայ ցուցա-
դրուած վիստրական ու հանդիսատար տողանցքը, որ
տեղի ունեցաւ Նոյեմբեր 7-ին առթիւ:

Իրիկունը գացինք «Պօլժօիա Թէաթրը», ուր ներ-
կայացուցին «Իվան Սուսան (ին)» օբերան:

Թ. 168ա.— Շրթ. 15 նոյեմ. 1958 (Ժամանում է
Տաշքենտ և Նյու Դելիի—Ն. Մ.):

Թ. 168բ.— Կիր. 16 նոյեմ. 1958 (Ժամանում է
Կալկաթա—Ն. Մ.):

Թ. 187ա.— Կալկաթա, Կիր. 21 դեկտ. 1958:

Այսօր ինծի այցելեց մի ոմն Գառնիկ Աղաբեկեան,
Պարսկաստանէն, ձաքոն գացած էր և անկէ կը վե-
րադառնար, առնորակաւ էր:

Թ. 192ա.— Կալկաթա, Դշ. 31 դեկտ. 1958:

Վերջ կուտանք այս տողերով 1958 տարւոյն, քիչ
վերջը դիմաւորելու համար Նոր Տարին:

Անցաւ պատմութեան այս տարին ալ, իր դրական
ու բացասական բոլոր լաւ ու վատ կողմերով, սա-
կայն քիչ ուրախութիւն, աւելի արցունք, ցաւ և վիշտ
կուտակած իր ընթացքի վրայ, մարդկութեան հա-
մար:

Պատերազմներու երկիւղով մարդիկ լուսցուցին
գիշերները, ջղային պատերազմ մըն էր, հիւլէի և
ջրածնի պէնքերու պատերազմներու վախը միշտ սոս-
կումով կախուած էր աշխարհի մարդոց ճակատա-
գրին վրայ:

Բարի ճանապարհը քեզի ով տարի, մենք կեր-
թանք դիմաւորել 1959-ը կէս ժամէն:

(Չեռագրում պահված է հայկազգի իրավաբան Ս.

Հ. Աբգարի այցեքարտը, գրված անգլերենով):

(Շարունակելի)